ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թվականի նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 3-ը
Շվեյցարիայի Համադաշնություն
կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Անի Իսպիրյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև), 2022 թվականի նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 3-ը

4. Հրավիրող կողմը՝

Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի՝ պետություն-մասնավոր գործընկերության հարցերով աշխատանքային խմբի 6-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները՝

Թվային փոխակերպում. Ինչպես կարող է բարելավվել ՊՄԳ ծրագրի ցիկլը՝ կայուն զարգացման նպատակներին ուղղված ՊՄԳ ծրագրերին իրագործման պարագայում:
ՄԱԿ ԵՏՀ գնահատման մեթոդաբանությունը և դրա բնապահպանական, սոցիալական և կառավարչական սկզբունքները:

Տարածաշրջանային տնտեսական զարգացում ՊՄԳ միջոցով, ենթակառուցվածքային ծրագրերում հանրային սեփականության առավելագույն օգտագործումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեղի են ունեցել հանդիպումներ ՄԱԿ ԵՏՀ ՊՄԳ աշխատանքային խնբի նախագահ Ջորջ Կատապոդիսի և ՄԱԿ ԵՏՀ Համագործակցության և գործընկերության վարչության Տնտեսական համագործակցության և առևտրի բաժնի ղեկավար Տոնի Բոնիչիի հետ: Քննարկվել են փորձի փոխանակման, խորհրդատվական և օրենսդրական կարգավորման ուղղություններով համագործակցության շարունակականության հնարավորությունները:

Միջոցառման ընթացքում մասնակիցներին է ներկայացվել զարգացման միտում ունեցող ոլորտները և վերջիններիս հեռանկարը, հանրային ներդրումների կարգավորման իրավական ակտերը, դրանց հիմնական թեզերը, գործիքակազմը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՄԱԿ ԵՏՀ Համագործակցություն և գործընկերություն վարչության Տնտեսական համագործակցության և առևտրի բաժնի ղեկավար Տոնի Բոնիչիի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ շարունակել ակտիվ համագործակցությունը ՄԱԿ ԵՏՀ գործընկերների հետ՝ լավագույն փորձի փոխանակման և ներդրման նպատակով, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի Հանրապետության համար թվով 8 ՊՄԳ ծրագրերի նախագծերի գնահատման և կայուն զարգացման նպատակներին համապատասխանության որոշման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

09.12.2022